Օրգանական գյուղատնտեսությունում առանցքային դերը վերապահվում է հենց իրեն՝ երկրագործին:

Օրգանական գյուղատնտեսությունը պահպանում է

- **էկոհամակարգերի ամբողջականությունը եւ բնական ռեսուրսների արդյունավետությունը,**
- **վայրի տեսակները եւ տեղական ագրոկենսաբազմազանությունը:**

Օրգանական գյուղատնտեսությունը օրինակելի մոդել է գյուղի զարգացման համար

Տեղական եւ պետական կառավարման մարմինները օրգանական գյուղատնտեսությունը պետք է օգտագործեն որպես ռազմավարություն գյուղի զարգացման համար՝ ներգրավելով գյուղական համայնքներին ու սպառողներին: Տեղական մարմինները կարող են ստեղծել նպաստավոր պայմաններ՝ իրենց շրջանում օրգանական երկրագործության զարգացման համար: Այս նպատակին կարելի է հասնել՝

- քաղաքներում կազմակերպելով ֆերմերների արտադրած օրգանական մթերքի շուկաներ,
- հասարակական սննդի օբյեկտներին (դպրոցների, հիվանդանոցների ճաշարաններ եւ այլն) ապահովելով տեղական եւ օրգանական մթերքներով,
- խրախուսելով էկո-ագրոտուրիզմը,
- երիտասարդ սերունդներին իրազեկելով գյուղատնտեսության, բնապահպանության եւ նրանց ամենօրյա սննդի միջեւ եղած կապի մասին:

Սույն հրատարակությունն իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության կողմից, «ԿՕԱ-ների եւ թունավոր քիմիկատների բացասական ազդեցության մասին իրազեկության բարձրացում Հայաստանի ծրագրային գյուղերում՝ ռիսկերի նվազեցման համար» ծրագրի շրջանակներում, Հայաստանում ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի եւ Հոլանդիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ՝ ELA ծրագրի շրջանակներում, «Եվրոպայի կանայք հանուն ընդհանուր ապագայի» միջազգային կազմակերպության միջոցով:

This publication was made possible thanks to the financial support of GEF SGP program in Armenia and WECF via its ELA program supported by the Netherlands Ministry of Foreign Affairs Development Cooperation within the framework of the project „Raising awareness on impact of POPs and toxic chemicals to reduce their risks in Hayanist, Khachpar, Fantan, Kaghsi, Solak and Dzoraghbyur villages“ by the Armenian Women for Health and Healthy Environment NGO.

gef
GLOBAL ENVIRONMENT FACILITY
INVESTING IN OUR PLANET

SGP The GEF Small Grants Programme

WECF
Women in Europe
for a Common Future

Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի ՀԿ

ՀՀ, ք. Երեւան 0019
Բաղրամյան պող. 24դ,
սենյակ 609

Հեռ. (+374-10)-52 36 04
office@awhhe.am
www.awhhe.am

Օրգանական հողագործություն

AWHHE

Երեւան 2009

Ինչու՞ օրգանականը

Բարձր բերք ստանալու համար, հայ երկրագործը հաճախակի օգտագործում է զանազան ագրոքիմիկատներ, որոնք թեեւ կարճաժամկետ դրական ազդեցություն են թողնում բույսերի վրա, սակայն համարվում են շրջակա միջավայրի եւ սննդի աղտոտիչներ: Թունաքիմիկատները ոչ միայն վտանգավոր են մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար, այլեւ շատ հաճախ կարող են չծառայել իրենց նպատակին: Միեւնույն ազդող նյութը պարունակող թունաքիմիկատների երկարատեւ օգտագործումը նպաստում է վնասատուների դիմադրողականության բարձրացմանը տվյալ միացությունների նկատմամբ: Իսկ միակողմանի ազոտական պարարտանյութերի օգտագործումը հողի է մարդկանց համար երկարաժամկետ բացասական, ընդհուպ մինչեւ քաղցկեղածին ազդեցությամբ: Վերջին տարիներին ընդգծված անհանգստությունը սպառողների առողջության եւ շրջակա միջավայրի պահպանության համար նպաստավոր հող ստեղծեց կայուն գյուղատնտեսության զարգացման համար նաեւ մեր երկրում: Միջազգային հանրությունը, դառնալով ավելի իրազեկ վերոհիշյալ խնդիրների մասին, ավելի ու ավելի է խրախուսում օրգանական գյուղատնտեսության եւ կայուն գյուղատնտեսության այլ ձեւերի զարգացումը:

Ի՞նչ է օրգանական գյուղատնտեսությունը

Օրգանական գյուղատնտեսությունն արտադրության այնպիսի համակարգ է, որն ապահովում է հողի, էկոհամակարգերի եւ մարդկանց առողջությունը:

Այն ավելի շուտ հենվում է բնապահպանական գործընթացների, կենսաբազմազանության եւ տեղական պայմաններին հարմարեցված փուլերի, քան հանքային պարարտանյութերի եւ թունաքիմիկատների օգտագործման վրա, որոնք թողնում են բացասական հետեւանքներ: Այն համակցում է ավանդական, նորարարական մեթոդները եւ գիտությունը, նպատակ ունենալով ստեղծել այդպիսի արտադրությունում ներգրավված բոլոր անձանց համար ավելի բարվոք շրջակա միջավայր եւ լավացնել կյանքի որակը:

Օրգանական են համարվում միայն այն բամթերքները, որոնք արտադրվել են հաստատված չափորոշիչներին համապատասխան, իսկ բուն արտադրությունը օրգանական է կոչվում, եթե սահմանված կարգով անցել է հավաստագրման ընթացակարգը:

Օրգանական արտադրության առավելությունները

- Օրգանական արտադրանքի գերազանց համային հատկանիշները, վնասակար հավելանյութերի բացակայությունը, բարձր որակը բարերար ազդեցություն են թողնում մարդու օրգանիզմի վրա, պահպանում են նրա առողջությունը
- Օրգանական տնտեսության վարումը նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը, այն հատկապես բարերար ազդեցություն է ունենում հողի բնական բերրիության վերականգնման վրա, նպաստում է բնական կենսաբազմազանության ընդլայնմանը:
- Օրգանական արտադրությունը նպաստում է երկրագործի եկամուտների ավելացմանը:

Օրգանական մթերքները՝

- անվտանգ են մարդու եւ շրջակա միջավայրի համար, քանի որ աղտոտված չեն նիտրատներով, ծանր մետաղներով, թունաքիմիկատների մնացորդային քանակություններով, հերբիցիդներով եւ այլ քիմիական նյութերով,
- չեն պարունակում հիվանդածին միկրոօրգանիզմներ, մակաբույծներ եւ ալերգիկ բաղադրիչներ,
- չեն պարունակում գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմներ եւ այդպիսի հիմքով արտադրված նյութեր,
- վերամշակման ժամանակ պահպանում են սննդարար հատկությունները, որակը, անվտանգությունը եւ բնական կազմը, քանի որ օգտագործվում են վերամշակման միայն բնական մեթոդներ եւ ավանդական բաղադրատոմսեր եւ փաթեթավորման բնական նյութեր: Բացի այդ, չեն օգտագործվում արհեստական հոտավետ նյութեր, կոնսերվանտներ, հավելանյութեր եւ այլն:

- Քիմիական պարարտանյութերի օգտագործումը նվազագույնի հասցնելը, երկրագործների համար ապահովում է առավել անվտանգ աշխատանքային միջավայր: